

Ստեփան Ոսկանյանը՝ արևմտահայ սահմանադրական շարժման մասին

Քրիստինե Գասպարյան

Հանգուցային բառեր. արևմտահայություն, սահմանադրություն, պարբերական մամուլ, Ստեփան Ոսկանյան, ազատություն, լուսավորություն

Նախաբան

19-րդ դարի կեսերի եվրոպական ազգային-ազատագրական շարժումների ազդեցությամբ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները ոտքի էլան հեղափոխական, ազգային, ազատագրական պայքարի՝ նպատակ ունենալով թոթափել թրքական դարավոր լուծը: Այդ տարիներին Եվրոպայում կրթություն ստացած մի խումբ հայրենասեր հայ երիտասարդներ, ոգեշնչված եվրոպական լուսավորական և ազատամտական գաղափարներով, վերադարձան հայրենիք և ձեռնամուխ եղան եվրոպական ազատասիրական գաղափարների տարածմանն ու գործադրմանը մայր հայրենիքում: Նրանք դարձան արևմտահայ ազգային սահմանադրական շարժման և ազգային սահմանադրության հեղինակներն ու կենսագործողները:

Արևմտահայ ազգային սահմանադրական շարժումը և ազգային սահմանադրության ընդունումը լայն արձագանք են գտել հայ հասարակական մտքում և պարբերական մամուլում, այդ թվում՝ Փարիզում լույս տեսնող արևմտահայ դեմոկրատական հոսանքը ներկայացնող «Արևելք» և «Արևմուտք» երկշաբաթաթերթերում: Հայ պատմագիտության մեջ «արևմտահայ լուսավորության մարտական օրգաններ»¹ «Արևելք» և «Արևմուտք» պարբերականների դիրքորոշումը ազգային սահմանադրական շարժման մասին հիմնովին լուսաբանված չէ: Եղած հրապարակումները սակավաթիվ են և ամբողջովին չեն լուսաբանում խնդրի էությունը:

¹ Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հատոր 1, Երևան, 1955, էջ 306:

Ստեփան Ոսկանյանի «Արևելք» պարբերականը

«Արևելք» և «Արևուտք» պարբերականների խմբագիրն արևմտահայ հասարակական գործիչ, հրապարակախոս Ստեփան Ոսկանյանն² էր: Նա հայ իրականության մեջ առաջին ազատ, «կրակոտ», «տաղանդաւոր հրապարակախօսն» էր, «ինքնատիպ, ուժեղ, յամառ ու տոկուն»³ բնավորության տեր անձնավորություն, հայ դեմոկրատական մտքի կրակառուն ներկայացուցիչներից մեկը: Նրա հասարակական-քաղաքական հայացքները ձևավորվեցին 1848 թ. ֆրանսիական հեղափոխության մթնոլորտում⁴: Արևելքից եկած երիտասարդը «ընկավ մի մեծ քուրայի մեջ, որտեղ բովվեց, կոփվեց նրա բնավորությունը»⁵, և դարձավ ժողովրդական ապստամբության մասնակիցներից մեկը: Այդ մասին նա հետագայում գրում էր. «Փետրվարեան ազատութեան առաջին որոտումը մեր վրայեն արևելյան գերութեան մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզ նետեց: ... Հրինք ազատութեան համար ամէն ինչ որ ամեն

² Ստեփան Ոսկանյանը (1825-1901) ծնվել է Ջմյուռնիայում, սովորել տեղի Մեսրոպյան վարժարանում: 1846 թ. մեկնել է Փարիզ, դասախոսություններ լսել Սորբոնի համալսարանում, Քոլեժ դը Ֆրանսում և Արվեստի բարձրագույն դպրոցում՝ ստանալով «գիտութեանց և դպրութեանց պսակավորի աստիճան»: 1848-1849 թթ. ֆրանսիական հեղափոխության օրերին ակտիվորեն մասնակցել է փարիզյան ցույցերին, զենքը ձեռքին մարտնչել, բանտարկվել և ստիպված որոշ ժամանակով լքել է Ֆրանսիան: 1849 թ. դարձել է Փարիզում ստեղծված «Արարատյան» ընկերության հիմնադիրներից մեկը: 1861-1862 թթ. Թուրինում հրատարակել է «L'Italie» թերթը: «Արևմուտքի» վերջնական փակումից հետո՝ 1866 թ., իզմիրցիների հրավերով վերադառնալով հայրենիք՝ Ստ. Ոսկանյանը ստանձնել է Մեսրոպյան դպրոցի տեսուչի պաշտոնը և դարձել Ջմյուռնիայի «Ուսումնասեր ընկերության» (1866 թ.) ինը հիմնադիրներից մեկը, ապա՝ դրա ատենապետը: Ջմյուռնիայում նա ֆրանսերեն լեզվով հրատարակել է «La Réforme» թերթը՝ շուրջ երեսուներեք տարի խմբագրելով այն: Տե՛ս **Կարինյան Ա.**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատոր 2, Երևան, 1960, էջ 432, **Լեո**, Ստեփան Ոսկան. // «Մուրճ», 1901, թիվ 11, 12, **Հրանտ Ասատուր**, Դիմաստուներներ, Կ.Պոլիս, 1921, էջ 105-118, **Հակոբյան Մ. Ն.**, Ստեփան Ոսկանյանի ... հետքերով // Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, թիվ 2, էջ 45-58,

³ Տե՛ս Լեո, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 11, էջ 112, 125, թիվ 12, էջ 176:

⁴ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 301:

⁵ Լեո, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 11, էջ 114:

մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռնն Թյուրքի մտնելու պատիվը ունեցանք»⁶:

1855 թ. հուլիսին Ստ. Ոսկանյանը Փարիզում «արի և գոտեպինդ» քարեկամների քաջալերությամբ հրատարակում է «Արևելք» հանդեսը, որի առաջնորդող հոդվածում հայտարարում է, որ իր պարբերականի ուղղությունը բոլորովին հակառակ է մինչ այդ հրատարակվող բոլոր թերթերին: Ազգը քսան տարուց ի վեր «իմաստակներու սուտումուտ գովեստը և անամօթ շողոքորթությունը լսելէ յետև քիչ մը ալ ճշմարիտ քննութեան և անշահասեր խրատի ականջ պիտի դնէ»⁷: Ստ. Ոսկանյանի համոզմամբ՝ թերթը չպետք է քաղցրալեզու լինի, այլ «պիտի աշխատի, որ մեր ողորմելի ազգը իւր այժմեան բուն վիճակը իմանա և իր մահաբիւր վերքերու դարման մը տանի»⁸: Անդրադառնալով հայ մամուլի պատմության մեջ «Արևելքի» թողած հետքին՝ Գր. Գալեմքեարյանը գրում է, որ խմբագրի համբավը և թերթի աղքատիկ բովանդակությունը «նպաստաւոր նշաններ չէին տար երկար կենաց»: 1856 թ. հունվարին թերթի 14 համար հրատարակելուց հետո «Արևելքը» փակվեց բաժանորդների սակավությունից կամ «ի հնարից հակառակորդաց և առ ի չգոյէ նիւթոց»⁹: Չնայած դրան՝ «Արևելքը» նշանավորել է մի կարևոր փուլ հայ մամուլի և հրապարակախոսության մեջ: Այս պարբերականով է սկզբնավորվել հայ քննադատական հրապարակախոսությունը, որը հասարակական հնչեղություն ստացավ: «Արևելքն» իր հետքը թողեց հայ պարբերական մամուլի պատմության մեջ հրապարակումների հրատապությամբ, ազգային իրականության համար կարևորություն ունեցող բազմաթիվ խնդիրների լուսաբանմամբ և «սուտ ազգասերների» դեմ սկզբունքային պայքարով: Այս հարցերում Ստ. Ոսկանյանը անհանդուրժող և անզիջում դիրքորոշում ուներ: Իր անողորմ, անսանձ քննադատությամբ Ստ. Ոսկանյանը չտեսնված երևույթ էր հայ իրականության մեջ: Նրա մտրակը շաչում էր աջ ու ձախ, հարվածում մինչ այդ անսխալական համարվող հասկացություններին, ազգային կուռքերին, առաջ բերում թշնամություն¹⁰: Ժամանակին Պիեմոնտի կառավարության ղեկավար

⁶ «Արևմուտք», 1859, 1 սեպտեմբերի, թիվ 17, էջ 132, 15 հոկտեմբերի, թիվ 20, էջ 159:

⁷ «Արևելք», Փարիզ, 1855, 1 հուլիսի, թիվ 1, էջ 2:

⁸ Նույն տեղում, էջ 3:

⁹ Գալեմքեարեան Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը, հատոր 1, Վիեննա, 1893, էջ 157:

¹⁰ Տէ՛ս Լեռ, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 11, էջ 125:

կումս Կամիլո Կավուրը, ում քարտուղարն ու երեխաների ուսուցիչն էր Ս. Ոսկանյանը, նրան խորհուրդ էր տալիս չափավորել իր հարվածների ուղղությունը և «ձեռնոց դնել, երբ գրե»¹¹:

Ստ. Ոսկանյանը «Արևելքի» գլխավոր խնդիրը համարում էր հայության «այժմեայ բուն վիճակի» լուսաբանումը և նրա «վերքերու դարման մը» գտնելը: Այս ուղեգծին նա հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը: Տարիներ անց նա խոստովանում էր, որ «Արևելքի» գլխավոր «արժեքն էր իր ազատությունը. անով, և անով միայն կրնար պարծիլ ուրիշ օրագիրներու քով»¹²:

Արևմտահայ նշանավոր հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը, համեմատելով Ստ. Ոսկանյանի «Արևելքը» ազգային պահպանողական հոսանքը ներկայացնող Հ. Չամուրճյան–Տերոյենցի՝ «Երևակ» և Ղուկաս Պալտազարյանի՝ «Արշալույս արարատյան» թերթերի հետ, իրավացիորեն գրում է. «հանճարի, գրչի, սկզբունքի ինչ ահագին անջրպետ կգնես մեկ կողմէն **Արևելքին** և մյուս կողմէն **Երևակին** և **Արշալույսին** մեջ»¹³:

«Արևելքի» խմբագիրը ազատության ջատագով ու քաջամարտիկ էր, հայությանը կոչ էր անում սթափվել, նայել «դէպ ի ապագան», ձեռքազատվել «սուտ նախապաշարուններից», երբեք չմոռանալ, որ պատմության վճիռն ազգի համար «մահաբեր հարուածի ծանրությունը ունի», իսկ ազգը պատասխանատու է իր սերունդների առջև: Նա հաճախ էր կրկնում, որ «ազատասերը միայն ազատութեան արժանի է»¹⁴:

Հանդեսի ջգերում Ստ. Ոսկանյանը առաջ էր քաշում արևմտահայության կյանքի, իրավունքների, Կ. Պոլսի ազգային ժողովի գործունեության մասին բազմաթիվ մտքեր, գաղափարներ, հանդես էր գալիս հարցադրումներով, որոնց մի մասը հետագայում տեղ գտավ արևմտահայերի ազգային սահմանադրությունում: Ստ. Ոսկանյանի դատողությունները միտված էին կանոնակարգելու հայ համայնքների կյանքի ամենահրատապ հարցերը: Նա անխնա քննադատում էր հայության պառակտումը, կրոնական վեճերն ու երկպառակությունները, կրոնափոխությունը, հավատուրացությունը, հոգևորականների բռնությունները: Հայ ամիրաներն ու հոգևորականները, կաթոլիկ եկեղեցու հետևորդներն ու նրանց կողմնակիցները դավեր էին նյութում, ամեն կերպ փորձում էին սանձել,

¹¹ Կարինյան Ա., նշվ. աշխ., էջ 434, Լեո, Ստեփան Ոսկան, //«Մուրճ», 1901, թիվ 12, էջ 170:

¹² «Արևմուտք», 1859, 15 հունվարի, թիվ 2, էջ 16:

¹³ Մամուրյան Ս., Հայկական նամականի // Երկեր, Երևան, 1966, էջ 408:

¹⁴ «Արևելք», 1855, 15 նոյեմբերի, թիվ 10, էջ 299:

գապել Ստ. Ոսկանյանի գրիչը: Նա անհանդուրժելի էր համարում Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի անդամ Պողոս ամիրա Տատյանի վարքագիծը հավատքի հարցում: Պ. Տատյանը Փարիզի արքեպիսկոպոսին ուղղված մի նամակում գրում էր, որ հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցիների միջև գրեթե տարբերություն չկա, և որ ինքն «այնպես լավ կաթոլիկ է», ինչպես արքեպիսկոպոսը¹⁵:

Ստ. Ոսկանյանին զապվածության կոչ անողներից մեկն արևմտահայ սահմանադրական շարժման ակունքներում կանգնած Հակոբ Կրճիկյանն էր՝ Ֆրանսիայում թուրքական դեսպանատան թարգմանը և Ռեշիդ փաշայի խորհրդականը¹⁶: Նա Ստ. Ոսկանյանին «բարեկամաբար» կոչ էր անում՝ «ձեր լրագրոյ բերանը փոխեցեք»: Հ. Կրճիկյանի, Գ. Այվազովսկու, Կ. Շահնագարյանի և այլոց ջանքերով «Արևելքի» հրատարակումը կասեցվեց: Հ. Կրճիկյանը պատվիրեց տպարանատիրոջը չտպագրել «Արևելքի ԺԵ թիւը, որ շարուած պատրաստ էր»¹⁷: Հետագայում «Արևմուտքի» էջերում Ստ. Ոսկանյանը քանիցս անդրադարձել է Հ. Կրճիկյանին, ում «անունը հայրենիքի չափ արժեք» ուներ շատ հայերի համար, բայց իր առջև «հազիւ թե հայ մը կարժե անիկա»¹⁸: «Պարոն Ակոբը,– գրում էր Ստ. Ոսկանյանը,– հաւատարիմ պաշտոնաւոր մ'է, և որովհետև Ռեշիտ բաշան զինք խրատատու ըրավ, կփափաքի թուրքերուն յայտնել որ արժանի էր այդպիսի պաշտօնի մը...»: Նա «բեմի վրայէ կգոչէ», որ «ամեն բանէ վեր ԲԱՐՈՅԱԿԱՆ պետք է», սակայն խրատ տվողի «առաջին պարտաւորութիւնն է խօսքին և գործին մէջ հակասութիւն չդնել և բարոյականը կը սահմանուի գիտութիւն պարտաւորութեան»¹⁹:

Ի տարբերություն Հ. Կրճիկյանի՝ Ստ. Ոսկանյանը գովեստով ու ակնածանքով է խոսում սահմանադրական շարժման գործիչներից Նիկողայոս Պալյանի մասին՝ նրան համարելով «բարոյական կատարելություններով» օժտված անձնավորություն, ով կարողացավ շահել «թագուն բարերարութիւնը» և իր տաղանդի շնորհիվ «հրաշակերտ մը երևան

¹⁵ «Արևելյան մամուլ», 1856, հունվար, թիվ 14, էջ 3:

¹⁶ Տե՛ս Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը // Ընդարձակ օրացոյց ազգային հիվանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1910, էջ 230:

¹⁷ Հ.Սաստուր, Դիմաստուերներ, էջ 109, Լեո, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 11, էջ 125:

¹⁸ «Արևմուտք», 1859, 1 ապրիլի, թիվ 7, էջ 49-50, 15 օգոստոսի, թիվ 16, էջ 123:

¹⁹ «Արևմուտք», 1859, 1 հոկտեմբերի, թիվ 19, էջ 143:

հանելԲոսֆորի ծովեզրի վրա»: Ստ. Ոսկանյանը սգում է նրա մահը՝ կարծիք հայտնելով, որ հազիվ թե Նիկողայոս աղայի «տաղանդը ետին բարձրութեան հասած էր իր հասակին մէջ»: Նա համոզված է, որ «եթե մահը խնայէր զինքը, իր արուեստագէտի հանճարը աւելի նշանաւոր կերպով պիտի փայլէր...»²⁰:

«Արևելքը» տպագրում է Կ. Պոլսի հայոց պատրիարքին և ազգային գերագույն և հոգևոր ժողովների անդամներին ուղղված բողոքը՝ ընդդէմ հայոց ազգային ժողովի անդամ Պողոս ամիրա Տատյանի՝ Փարիզի արքեպիսկոպոսին ուղղված «տետրակի» և Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցի «Ձոհակ» («Երևակ») թերթի: «Արևելքի» պատմելով՝ Տատյան ամիրան և Հ. Չամուռճյանը կարծիք են հայտնում, որ հայ առաքելական և կաթոլիկ եկեղեցիների դավանաբանական առումով ընդհանրական են և «Հռովմայու և մեր Եկեղեցուց կրօնքին և դաւանանքին մէջ իսկական տարբերութիւն մը» չկա²¹: «Արևելքը» մեջբերում է ֆրանսիական «Յունիվեր» թերթի հրապարակումը հայ ժողովրդի մասին: Հռովմագիրը զայրույթով նշում է, որ ֆրանսիական թերթն իրեն թույլ է տալիս հայոց ազգային ժողովի անդամներին նախատել, կրոնական ժողովին և հոգևորականությանը վատաբանել, նրանց միջև թշնամություն սերմանել, հայության մեծ մասին տգետ համարել, ինչի պատճառը Ստ. Ոսկանյանը համարում է Պողոս Տատյանի վերոհիշյալ տետրակը²²:

«Արևմուտքը»՝ ազգային սահմանադրության մասին

«Արևելքի» խափանումից երեք տարի անց Ստ. Ոսկանյանը Փարիզում ստանձնեց «Արևմուտք. Արձագանք Եվրոպայի լուսաւորութեան» երկշաբաթաթերթի խմբագրությունը, որը «սոյն տարին կրցավ միայն բոլորել»: Թերթի խմբագիրը հանձն էր առել «կրօնի և անձնական խնդիրներէ զգուշանալ»²³, սակայն տարին չբոլորած հրաժարական տվեց, քանի որ «թոյլ չէին տար ազատասէր շարագրին գրիչին սանձերը»²⁴: 1864թ. փետրվարի 1-ին «Արևմուտքը» կրկին հրատարակվեց, բայց «երկրորդ տարին կարելի չէղաւ ամբողջացնել»: Տարեվերջին դադարելուց հետո հաջորդ տարի ևս մի քանի համար հրատարակվեց: 1864 թ. սկսած «Արևմուտքի» խմբագիրը «հասուն միտք մը և ավելի հանդարտ սիրտ մը

²⁰ «Արևմուտք», 1859, 1 մարտի, թիվ 5, էջ 34:

²¹ «Արևելք», 1856, 15 հունվարի, թիվ 14, էջ 418-423:

²² Տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս Լեռ, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 12, էջ 148:

²⁴ Գալեմքեարեան Գ., նշվ. աշխ., էջ 189:

ստացած», «Կ. Պոլսոյ հայ հասարակութեան, հրատարակութեանց, Սահմանադրութեան գրադէրով՝ խոռոված միտքերն աւելի անդորրացուց և յինքն յանկոյց»,– գրում է Գ. Գալեմքեարյանը: Այժմ արդէն «Արևմուտքի» հոդվածները «կցուցանեն գրողին սուր միտքը, զգացմանց ազնուութիւնն ու դատողութեանց անկեղծութիւնը...»²⁵,– եզրակացնում է նա: Անդրադառնալով Գալեմքեարյանի հիշյալ մտքին՝ Լեոն կարծիք է հայտնում, թէ «վերջին խոսքերը մեզ անհավանական են թվում»: Սո. Ոսկանյանը մինչև վերջ մնաց «նույն ապստամբ հոգին, նույն մարտնչողը»²⁶:

«Արևմուտքի» հրատարակման առթիվ Ջոյնտոնիայի «Արշալույս արարատյան» հանդեսի էջերում կարդում ենք. «Կրճանչեմք ի վաղուստ անտի Արևմուտք նորահաստատ լրագրոյն գիտնական խմբագրին անկեղծ և անշահասէր բնաւորութիւնը և ազատամտութիւնը. Կրճանաչեմք նաև իւր ճշմարիտ ազգասիրութիւնը», սակայն ազգային առաջադիմութեան մասին նրա կարծիքն ու գաղափարները տարբեր են «ազգայնոց շատերուն գաղափարներէն և կարծիքէն»²⁷:

«Արևմուտքի» նպատակն էր «միտքի ազատութիւն և հայրենիքի լուսաւորութիւնը»²⁸, ինչը կարմիր թելի պէս անցնում է թերթի բոլոր համարներում: «Օրէնքը ազատութիւն կուտայ ինձ, ինչու պիտի զայն չվայելեմ և ազգիս օգտին համար գործ ածեմ»²⁹,– գրում է Ստեփան Ոսկանյանը: Պարբերականի էջերում նա կոչ էր անում վերջ տալ ազգային և կրոնական պառակտմանը, ձերբազատվել թուրքական ատելի լծից և միավորվել անկախ պետության մեջ: Դրան հասնելու հաստատուն ճանապարհը խմբագիրը համարում է կրթությունը, լուսավորությունը, ազգային արժեքների, ընտանեկան բարքերի պահպանումն ու տարածումը, միակ գրավականը՝ կրոնը և հավատքը հաստատուն պահելը:

Ստեփան Ոսկանյանը իր վրդովմունքն է հայտնում հայ եկեղեցու պառակտման, կաթոլիկ և բողոքական համայնքների ի հայտ գալու կապակցությամբ, դատապարտում է դավանաբանական երկպառակությունները, կրոնավորների անօրէնությունները, դրվատում ազգի հոգևոր միասնությունը: Խմբագրի կարծիքով՝ «ուրիշ դարման չկայ կրօնական խռովութիւններուն վերջ տրուելու համար՝ եթէ ոչ հոգևոր իշխանութիւնը

²⁵ Նույն տեղում, էջ 191:

²⁶ Լեո, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 12, էջ 171:

²⁷ «Արշալույս արարատյան», 1859, 9 հունվարի, թիվ 588, «Արևմուտք», 1859, 15 փետրվարի, թիվ 4, էջ 7:

²⁸ «Արևմուտք», 1859, 15 մարտի, թիվ 6, էջ 48:

²⁹ «Արևմուտք», 1859, 1 ապրիլի, թիվ 7, էջ 51:

մարմնաւորէն զատելով»³⁰: Նա համոզմունք է հայտնում, որ կրոնի «բռնաւորները աշխարհական բռնաւորներէն տարբեր դրութիւն մը չունին», վայ այն ժողովրդին, «որոս կրթութիւնը, լուսաւորութիւնը և ապառնի վիճակը այս տեսակ մարդերու ձեռքն են»: «Արևմուտքի» խմբագրի մեծագոյն փափագն էր «Հայերուն մէջ աշխարհական միութիւն մը հաստատել և ազգային խնդիրը անով լուծել»³¹:

Ստ. Ոսկանյանը կարևորում է հայոց Ազգային ժողովի գործունեւթյունը: Նրա կարծիքով, եթէ ամեն քաղաք, ուր բազմաթիվ հայեր կան, Կ. Պոլսի Ազգային ժողովի մէջ «երեսփոխան մը ունենար, որ իր նիւթական շահերու վրա հսկեր և իհարկին պաշտպաններ գանոնք», եթէ հայ վարդապետերը «Եկեղեցիէն դուրս ուրիշ բաներու չխառնուէին», հայ քահանաները, ովքեր հայոց եկեղեցու «ճշմարիտ և պիտանի սիւներն են», մի քիչ ավելի գիտուն լինէին, հայ ժողովուրդը «առակ նշաւակի չէր ըլլար ուրիշ ազգերու առջև»³²: Ստ. Ոսկանյանի մեկնաբանմամբ՝ երեսփոխան բառը «կը նշանակէ և անոր էութիւնը մէյ մը ընտրութիւնով և մէյ մ'ալ լիակատար իշխանութիւնով կը հաստատուի թէ՛ ազգին և թէ՛ օտարներու մէջ»³³:

Իր հրապարակումներում Ստեփան Ոսկանյանը անդրադառնում է նաև արևմտահայության ազգային սահմանադրության ընդունմանը և Բարձր դռան կողմից հաստատվելուն: Նա անթաքայց հումորով ներկայացնում է պոլսեցիների հրճվանքը ազգային սահմանադրության ընդունման կապակցությամբ, սահմանադրություն շնորհողներին մեծարելը, նրանց հետ հույսեր կապելը: Կ. Պոլսի հայերը «կստիպին զայն հմայելի պէս կուրծքերնուն վրա դրոշմել ու փառաւորվիլ հացկերույթի երթալու ատեն», – գրում է Ստ. Ոսկանյանը³⁴:

Ավելորդ համարելով «քննութիւն մը սկսիլ Ֆուադ բաշային վսեմ կնիքով վավերութիւն գտած ճշմարտութեան մը վրա՝ փորձաքար զարնելով»՝ Ստ. Ոսկանյանը վճռում է՝ «սահման կոնենք մեզ Սահմանադրութիւնը չքննել» և բոլորի նման «անքննին երկինք հանել զայն»: «Տոնախմբումի օր տրտում չկեցվի», ուստի «Արևմուտքի» խմբագիրը նախընտրում է ամենքի հետ գոռալ՝ «ապրի՛, բյուր ապրի՛ Ֆուադ հայսեր բաշան»: Ստ. Ոսկանյանն իր բուն նպատակը համարում է «միտքերը շարժելը և

³⁰ «Արևմուտք», 1859, 1 հունվարի, թիվ 1, էջ 5:

³¹ «Արևմուտք», 1859, 15 հոկտեմբերի, թիվ 20, էջ 155:

³² «Արևմուտք», 1859, 1 հունվարի, թիվ 1, էջ 5:

³³ «Արևմուտք», 1859, 15 մարտի, թիվ 6, էջ 46

³⁴ «Արևմուտք», 1864, 1 փետրվարի, թիվ 1, էջ 2:

զանոնք կեղծիքներու սահմանեն դուրս հանելը», քանի որ «ձևելեն ետքը կտավին արժեքը հարցնելու չէ, հապա շուտով կարելու և հագնելու զայն, որ մերկ անդամները ծածկվին», հակառակ դեպքում «հեզնասերներու ծաղրին պիտի արժանանանք»³⁵: Նրա համոզմամբ՝ «վարպետ արհեստավորը երևելի բան կրնա շինել դույզն գործիով», մինչդեռ «ամենէ ընտիր գործին տգետ բանվորի մը ձեռք չկրնար հրաշակերտ մը դուրս գալ»³⁶: Նույնը վերաբերում է նաև ազգային սահմանադրությանը, որը ճիշտ ձեռքերում հայտնվելու և տեղին գործադրելու դեպքում կնպաստի ազգային առաջընթացին:

Ստ. Ոսկանյանի կարծիքով, օրենք հաստատելուց զատ, շատ կարևոր է օրինապահ լինելը և օրենքին հնազանդ լինելու ցանկությունը: Մարդու կողմից ստեղծված օրենքը, որ «բնութեան օրենքին ներհակ է, ո՛չ տևութիւն ունի և ո՛չ բարի հետևութիւն»: Մահմանադրության, օրենքի «դէմ սահման դնել գետին երկու եզրերու վրա թուղթ պատուար շինելու քմայք մը կրնա սեպվիլ», մինչդեռ ամեն սահման դնելուց առաջ ժողովուրդը պետք է «հայրենիքի սահման որ գտնէ, և մենք դէռ հայրենիք չունինք»³⁷, – գրում է նա:

«Արևմուտքը» պոլսահայությանը հորդորում է չբավարարվել սահմանադրության ընդունումով, «մտքով կազդուրվիլ, ասիական սնափառութիւնը մեկդի ձգելով լռին գործ տեսնել», որպեսզի շարժումը Կ.Պոլսից բացի տարածվի նաև մյուս քաղաքներում և լուսավորության օրինակ ծառայի: Ստ. Ոսկանյանի կարծիքով՝ «ազգութեան հիմին համար թուղթեն ուրիշ նյութ մը պետք է հորինել», «մարդու արարածները հարկավ պակասավոր և կարոտութիւն ունին միշտ սրբագրվելու: Երբ բազմութիւն մը իր ըրածը կսրբագրէ գրեթէ զինք, կսրբէ, կմաքրէ և կընդունի ի վերջն այն փայլութիւնը, որ լուսավորութեանը սկիզբը կրնա սեպվիլ»³⁸:

Սահմանադրության ուղին բռնած պոլսահայության հաջողության հասնելու միակ պայմանը «իր դրած սահմանէ ելնելն» է: Ստ. Ոսկանյանի կարծիքով՝ պոլսահայությունը առաջին հերթին պետք է ձգտի մնացած «ազգայիններու միտքը բանալ և ազգության բազմանիվ մեքենային կանոնավորապես շարժելուն օգնել»: Եթէ ազգը «մեկ գորութիւնով չշարժիր,

³⁵ «Արևմուտք», 1864, 1 փետրվարի, թիվ 1, էջ 5:

³⁶ Նույն տեղում, էջ 2:

³⁷ Նույն տեղում, էջ 2-3:

³⁸ Հակոբյան Մ., Ստ. Ոսկանյանի «Արևմուտքը» 1864-1865 թթ. // Պատմաբանասիրական հանդես, 1974, թիվ 3, էջ 222:

երբեք մեկ անիվ չբավարարեր կիրքերով շարժված մեքենայի մը»: Կարգ, կանոն, օրենք չեն կարող մեծ արժեք ունենալ, եթե «անկարելի է համոզում տալ և համոզելու համար պետք է որ զինքը օրինակ ծառայէ կամ արդյունք երևան հանէ»³⁹:

Ստ. Ոսկանյանը կոչ է անում պոլսահայությանը չմոռանալ, որ օտարի հողի վրա է ապրում, այնպիսի միապետի իշխանության ներքո, ով իշխում է «կրոնքով ու սերունդով» միսյանցից տարբեր շատ ազգերի վրա, իսկ հայը «Պոլսի մէջ արտոնութենէն ուրիշ բան չունի»: Ստ. Ոսկանյանի համոզմամբ՝ «արտոնությունը տվողը գորութիւն ունի այն ետ առնուլ առանց մեկէ մը ակնածելու երբեք», «հին թյուրք մը կրնա նոր թուրքի մը դրոշմին վրա իր դրոշմը դնել և գրուածը բոլորովի անընթեռնելի ընել», մանավանդ Թուրքիայի նման մի երկրում, ուր Եվրոպայի նման ազատություն չկա, ուր «արձակ իշխանին կամքը կրնա մեկ հարվածով խարխուլ թունմը փլել»⁴⁰: Այդ դեպքում հայությունը կարող է կանգնել երկրնորանքի առջև՝ կամ «զենքի երթալ», չնայած որ «հասարակ պարտք մը կատարելու հոժարություն չկա, թող թե արիւն թափելու պարտքը, որ հետին կամ նվիրական գոհ մը կրնա սեպվիլ», կամ էլ մնալ «ինչպէս ենք քիչ մը ծռելով և լռիկ սպասելով, որ դեպքերը կամ միտքը մեզ ուղղութիւն մը տան կամ կոթնելու կետ մը պատրաստեն»: Դրանից ելնելով՝ Ստ. Ոսկանյանը համոզմունք է հայտնում, որ «ազատության կամ իրավունքի կիրառութիւնը ուրիշներու կամքէ կկախվի և ոչ անբռնաբարելի օրենքէ մը»⁴¹:

Օսմանյան կառավարության շնորհած արտոնությունը անզգուշաբար չկորցնելու, սահմանադրության գործադրումը կասեցնելը թույլ չտալու նպատակով Ստ. Ոսկանյանը ճշմարիտ հայրենասերներին հորդորում է «ինքնօրենութիւնը չծախել ուրիշներուն, եղած թույլտվութենէն օգուտ քաղել և որքան կարելի է բան արդյունավորել՝ պոռացող կամ մեծ մեծ բրդող մարդերը ազգին ռիսերիւն թշնամի հավատալով»: Նա կոչ է անում «հայրենիքին ակոսը հերկել սուրբ հունտեր սերմանելով, որ առատ հունձ պատրաստվի, հուռթի ոստեր տնկելով, որ բարի ծառեր երևան գան»⁴²:

Ստ. Ոսկանյանը խոստովանում է, որ խուսափում է ազգային սահմանադրության և ազգային վարչության գործունեության մասին լիարժեք

³⁹ Նույն տեղում, էջ 3:

⁴⁰ «Արևմուտք», 1864, 1 փետրվարի, թիվ 1, էջ 4:

⁴¹ Նույն տեղում, էջ 4:

⁴² Նույն տեղում, էջ 2-3:

կարծիք արտահայտելուց՝ մնացյալը «գուշակութեան» թողնելով ընթերցողին: «Կլոենք վասնզի ... այս խնդրին քննութիւնը հիմա անպատեհ կթուի մեզ»: «...Ինչ որ չենք ըսեր, չենք ուզեր ըսելու կամ չենք կրնար ըսելու»⁴³, – գրում է նա:

Արևմտահայ հրապարակախոս, անվանի հասարակական գործիչ, «Օաղիկ» հանդեսի խմբագիր Գրիգոր Զիլինկիրյանը, անդրադառնալով ազգային սահմանադրությանը նվիրված Ստ. Ոսկանյանի հոդվածին՝ գրում է. Ստ. Ոսկանյանը «խորհելու և խօսելու ազատութեան սկզբունքը կընդունի, մենք ևս միննոյն սկզբունքը պաշտողներեն ենք ... անշուշտ պիտի բարեհաճի ներել մեզ որ ըսենք ինչ որ կը խորհինք»: «Արևմուտքը» «արժան չդատեր քննել Սահմանադրութիւն ըսուած նիւթը, կարծելով, թէ այսպիսի քննութիւն մը կիրքերը և սիրտերը պիտի բորբոքէ, ուստի կբավականայ հեզնելով զայն»⁴⁴: Գ. Զիլինկիրյանը նախընտրում է քննությունը, որը կարող է սոսկ կրքեր բորբոքել, իսկ հեզնանքը կարող է վիրավորել ողջ հայության ազգային զգացումը և ինքնասիրությունը: Զիլինկիրյանի կարծիքով՝ «մեր հարզի պաշտոնակիցը կսխալի, երբ կը կարծէ թէ Սահմանադրությունը զգայութեան հետևութիւն է»: Նա հավաստիացնում է, որ «քանի մի բանիբուն անձեր ասկէ տասը տարիի չափ առաջ յղացած էին սահմանի մը ներքև մտնելու տեսիլը և յարմար առթի կսպասեին զայն գործադրելու համար»: Ինչ վերաբերում է հայրենիքի սահման ունենալու ազնիվ փափագին, «դեպի հայրենի սահմանները մղվելու թերութիւնները չստացած՝ հայրենիք երազելն ալ ... ոչ նուազ կեղծիք մը կրնա համարուիլ առայժմ»: Նախ և առաջ անհրաժեշտ է «մտքի հանրական շարժում», «Բարձրագոյն դրան առջև՝ Ազգային օրինաւոր երեսփոխանական հարզի վարչություն..., որի հետևութիւնը պիտի ըլլա լոյսէն առաջ հացի կարօտ հայերուն իրավունքները պաշտպանելը» և «ազգային յառաջադիմութեան քայլը արգիլող տոհմային զեղծումները ջնջելը»: Անհրաժեշտ է ազգային կրթությունն ամուր հիմքերի վրա դնել ոչ միայն Կ.Պոլսում և Զմյուռնիայում, այլև հայ հայաբնակ այն երկրներում, ուր մայրենի լեզուն հասկացող չկա, ուր մնաց՝ հայրենիք բառի նշանակությունն իմացող: Ստ. Ոսկանյանը «ազատութեան դրօշակիր զինուոր է, չկրնար Սահմանադրութեան հակառակորդ մ' ըլլալ, ուսկէ կհետևի թէ

⁴³ Հակոբյան Մ., նշվ. աշխ., էջ 222:

⁴⁴ Տե՛ս «Օաղիկ», 1864, 20 փետրվարի, թիվ 74, էջ 90:

անոր դիտաւորութիւնն է գանգատիլ ազգային Սահմանադրութեան անկատարութեան վրայ»⁴⁵, – եզրակացնում է Գ. Չիլինկիրյանը:

Ըստ Ա. Խառատյանի՝ Ստ. Ոսկանյանը «չի ըմբռնել արևմտահայ սահմանադրական շարժումը և դրա հասարակական բովանդակությունը: Սահմանադրության մեջ նա չէր նկատում սոցիալ-տնտեսական հակասությունների ու հասարակական ուժերի նոր փոխհարաբերության որևէ իրողություն: Ոսկանյանը «Արևմուտքում» ժխտել է սահմանադրական շարժումների իմաստն ու հասարակական արժեքը: Նա առաջ էր քաշում ազգային ինքնորոշման գաղափարը, նկատելով, թե «ժողովուրդը ամեն սահմանե առաջ հայրենիքի սահման պետք է որ գտնէ...»⁴⁶: Նրա կարծիքով՝ «Ստ. Ոսկանյանը սահմանադրությունը չի գնահատում որպես արևմտահայերի ազգային-քաղաքական կյանքի հասունացած պահանջի արտահայտություն, այլ իբրև ոչ բնական իրավական ակտ»⁴⁷:

Խոսելով հայոց Ազգային վարչության ատենապետ Սերովբե Վիչենյանի կողմից պաշտոնը ստանձնելու և դրա գործադրման հետ կապված դժվարությունների մասին՝ Ստ. Ոսկանյանը հույս է հայտնում, որ նա «հայրենիքի շահը ամեն ակնածութենեն վեր կը դասէ», իսկ նրա հաջող գործունեության արդյունքում «այս ատյանը գահի փոխվի օր մը և սքալբելի տեղ գավագան մը տրուի իրեն»⁴⁸: Եթե ատենապետն իր գործառույթները պատշաճ չկատարի, «Արևմուտքը» պատրաստ է հանդես գալ որպես դատավոր, «բոլոր ազգը հրավիրել, որ դատե և եթե պակասավոր գտնվի, դատապարտէ իսկ»⁴⁹:

Ստ. Ոսկանյանը վրդովմունք է հայտնում, որ Ս. Վիչենյանի մասին գրած իր տողերը ճիշտ արձագանք չեն գտել Կ. Պոլսում և Զմյուռնիայում: Նա գրում է, որ «Արևմուտքի» 6-րդ համարը թուրքերեն սխալ թարգմանությամբ ներկայացվել է Ֆուադ փաշային: Այժմ Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայերը պահանջում են, որ «Արևմուտքին արժանի պատիժ տրուի այն յանդգնութեան համար, որով պարոն բժիշկ Սերվիչենը կհրավիրեր ազգասիրություն ընել և ոչ անտարբերություն կամ փառասիրություն իր

⁴⁵ Նույն տեղում, էջ 91:

⁴⁶ Խառատյան Ա., Ստեփան Ոսկանյանը և գմյուռնահայ դեմոկրատները // Բանբեր Երևանի համալսարանի, 1975, թիվ 1, էջ 140-151:

⁴⁷ Խառատյան Ա., Դարձյալ գմյուռնահայ դեմոկրատների և Ստ. Ոսկանյանի գնահատման առթիվ // Բանբեր Երևանի համալսարանի, 3 (30), Երևան, 1976, էջ 107-121:

⁴⁸ «Արևմուտք», 1864, 1 փետրվարի, թիվ 1, էջ 3:

⁴⁹ Նույն տեղում, էջ 4:

պաշտոնին վերաբերված խնդիրներին վրայոք»⁵⁰: Ստ. Ոսկանյանը փաստում է, որ «Արևմուտքը գրողը նվաստություն չի ունեցել տակավին մեկու մ' առջև ծունր դնիլ կամ քծնիլ», ուստի նման բան չի անի ազգային վարչության ատենապետի առջև: «Արևմուտքը» «իր ներքին համոզումը կհայտնե առանց մեկի մը կողմը հակելու»: Նրա հավաստմամբ Ս. Վիչենյանը «իր երիտասարդությունը բարի և արթուն հիշատակ մը ձգած է Փարիզի մեջ»: Այժմ նրան մաղթում է ավելի մեծ փառքի ու շուքի հասնել Օսմանյան կայսրության հովանու տակ, բայց ոչ երբեք սպառնալիքի գնով: «Արևմուտքի» խմբագիրը ազգային վարչության ատենապետին կոչ է անում մշտապես հիշել, որ այն «սահմանը, որու վրա կհսկե, զեվզեկներուն անսահման լրբություն տալու համար չէ, հապա առաքինի և հարգի ազգայինները պաշտպանելու»: Թող բժիշկ Սերվիլյանը համոզված լինի, որ «ազգութեան և պատվի խնդիրներու մասին մենք իրեն հավասար, եթե ոչ վերագույն զմեզ կարծելու հանդգնություն ունենք և մեր իրավունքն է ալ իր արտաքին կեանքը դատել: Եթե ինք պատիվ ունի ատյան ելնել և բեմի վրայեն խոսիլ հայերուն», մենք ոչ նվազ պատիվ ունինք «Արևմուտքի» սյուներու կրթոնիլ և իր բեմի վրայեն քարոզել»⁵¹, – եզրավացնում է նա:

«Արևմուտքը» ուրախությամբ տպագրում է «վեհափառ» սուլթան Աբդուլ Ազիզի հայտարարությունը օսմանյան կայսրության բոլոր հպատակներին առանց խտրականության հավասարություն շնորհելու վերաբերյալ⁵²: Որքան էլ որ դժվար է հավասարությունը «լիորեն մեկնիլ, երբ այսպիսի ծանր բառ թագավորի բերնեն կելլէ», այնուամենայնիվ Ստ. Ոսկանյանը փորձում է իր ընթերցողին պատկերացում տալ ժողովրդավարական սկզբունքների վերաբերյալ: Նա ողջունում է ձեռնարկվող լուսավորական քայլերը, մեկնաբանում ազատության, իրավունքի, քաղաքական հավասարության էությունը, փաստում «բարբարոսական իրավունքը» նոր սկզբունքներով փոխարինելու անհրաժեշտությունը: Ըստ հեղինակի՝ Օսմանյան տնտեսությունը «փետուր փոխելու վրա է ժամանակին սպասելով, որ մորթը ևս փոխէ»⁵³: Հավասարությունը շուտով «միապետության կնիքով կօծվի հպատակ ազգերու գլխի վրա», բայց հարկ է, որ հավասարություն հռչակելուց հետո սուլթանը «վեհա-

⁵⁰ «Արևմուտք», 1864, 15 ապրիլի, թիվ 6, էջ 46-47:

⁵¹ Նույն տեղում, էջ 47:

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 41:

⁵³ «Արևմուտք», 1864, 15 ապրիլի, թիվ 6, էջ 42, 1 մայիսի, թիվ 7, էջ 49:

փառ Ապտ-Յուլ-Ազիզը կպարտավորի հրավեր մը դրկել ազատության, որ գա իր քույրը համբուրէ»,– նկատում է հողվածագիրը: Լինելով ազատության ու հավասարության ջերմ պաշտպան՝ Ստ. Ոսկանյանը ավստսանք է հայտնում, որ այս խնդիրը «ուզածնուս պես չենք կրնար քննել առանց օրենքի դէմ երթալու»⁵⁴:

Եզրակացություն

Ստ. Ոսկանյանը առաջ էր քաշում արևմտահայության կյանքի, իրավունքների, Կ. Պոլսի ազգային ժողովի գործունեության մասին բազմաթիվ մտքեր, գաղափարներ, հանդես էր գալիս հարցադրումներով, որոնց մի մասը հետագայում տեղ գտավ արևմտահայերի ազգային սահմանադրության մեջ: Ստ. Ոսկանյանի դատողությունները միտված էին կանոնակարգելու հայ համայնքների կյանքի ամենահրատապ հարցերը:

Ստ. Ոսկանյանը խուսափում է ազգային սահմանադրության վերաբերյալ հստակ դիրքորոշում արտահայտելուց, սակայն իր հանդեսների էջերում պարբերաբար արտահայտած մտքերը բավական են ենթադրելու, որ խմբագիրը չի կիսում հայության այն զանգվածի ոգևորությունը, որը ոգեշնչված է ազգային սահմանադրության վավերացմամբ: Նա կոչ է անում պոլսահայությանը չսահմանափակվել ազգային սահմանադրության ընդունմամբ, ձեռքագատվել ասիական սնափառությունից և զբաղվել ժողովրդի կրթության ու լուսավորության գործով, ամուր պահել ազգային ավանդներն ու ընտանեկան բարքերը: Նա հույս է հայտնում, որ օրերից մի օր հայությունը կթոթափի թուրքական ատելի լուծը և կվերականգնի իր անկախությունը:

⁵⁴ «Արևմուտք», 1864, 15 ապրիլի, փետրվարի, թիվ 6, էջ 42, 1 մայիսի, թիվ 7, էջ 51:

Գրականություն

1. Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը // Ընդարձակ օրացոյց ազգային հիվանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1910:
2. Գալեմբեարեան Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը, հատոր 1, Վիեննա, 1893:
3. Լեո, Ստեփան Ոսկան // «Մուրճ», 1901, թիվ 11, 12:
4. Խառատյան Ա., Դարձյալ զմյուռնահայ դեմոկրատների և Ստ. Ոսկանյանի գնահատման առթիվ // Բանբեր Երևանի համալսարանի, 3 (30), Երևան, 1976, էջ 107-121:
5. Խառատյան Ա., Ստեփան Ոսկանյանը և զմյուռնահայ դեմոկրատները // Բանբեր Երևանի համալսարանի, 1975, թիվ 1, էջ 140-151:
6. Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատոր 2, Երևան, 1960:
7. Հակոբյան Մ. Ն., Ստեփան Ոսկանյանի ... հետքերով // Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, թիվ 2, էջ 45-58:
8. Հակոբյան Մ., Ստ. Ոսկանյանի «Արևմուտքը» 1864-1865 թթ. // Պատմաբանասիրական հանդես, 1974, թիվ 3, էջ 219-235:
9. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հատոր 1, Երևան, 1955:
10. Հրանտ Ասատուր, Դիմաստուներ, Կ. Պոլիս, 1921:
11. Մամուրյան Մ., Հայկական նամականի // Երկեր, Երևան, 1966:
12. «Արևելյան մամուլ», 1856, հունվար, թիվ 14:
13. «Արևելք», Փարիզ, 1855, 1 հուլիսի, թիվ 1, 15 նոյեմբերի, թիվ 10, 1856, 15 հունվարի, թիվ 14:
14. «Արևմուտք», 1859, 1 հունվարի, թիվ 1, 15 հունվարի, թիվ 2, 15 փետրվարի, թիվ 4, 1 մարտի, թիվ 5, 15 մարտի, թիվ 6, 1 ապրիլի, թիվ 7, 15 օգոստոսի, թիվ 16, 1 սեպտեմբերի, թիվ 17, 1 հոկտեմբերի, թիվ 19, 15 հոկտեմբերի, թիվ 20, 1864, 1 փետրվարի, թիվ 1, 15 ապրիլի, թիվ 6, 1 մայիսի, թիվ 7:
15. «Արշալույս արարատյան», 1859, 9 հունվարի, թիվ 588:
16. «Օաղիկ», 1864, 20 փետրվարի, թիվ 74:

Степан Восканян о западноармянском конституционном движении

Кристине Гаспарян

Резюме

Ключевые слова: *западные армяне, конституция, периодическая печать, Степан Восканян, свобода, просвещение*

Под влиянием европейского национально-освободительного движения середины XIX века народы Османской империи начали революционную, национально-освободительную борьбу с целью разорвать многовековое турецкое иго. В течение этих лет группа патриотичной армянской молодежи, обучающейся в Европе, вдохновленная европейскими либеральными и просветительскими идеями, вернулась на родину, чтобы распространять и воплощать идеи европейской свободы на своей родине, став авторами и исполнителями западно-армянского национального конституционного движения и национальной конституции.

Западно-армянское национальное конституционное движение и принятие национальной конституции получили широкий резонанс в армянской общественной мысли и в периодической печати, в том числе в журналах «Аревелк» и «Аревмутк», представляющих западно-армянское демократическое течение, издаваемых в Париже под редакцией Степана Восканяна. В армянской историографии позиция журналов «Аревелк» и «Аревмутк» по отношению западноармянского конституционного движения освещена не полностью. С. Восканян приветствует принятие национальной конституции, одновременно призывая армян не ограничиваться принятием национальной конституции, а заняться образованием и просвещением народа. Он надеется, что очень скоро армяне восстанут против чужеземного ига и восстановят свою независимость.

Stepan Voskanyan on the Western-Armenian constitutional movement

Kristine Gasparyan

Summary

Key words: Western Armenians, constitution, periodical press, Stephan Voskanyan, freedom, enlightenment

Influenced by the European national liberation movements of the mid-19th century, the peoples of the Ottoman Empire embarked on a revolutionary, national, liberation struggle with the aim of breaking the centuries-old Turkish yoke. In those years, a group of patriotic Armenian youth educated in Europe, inspired by European enlightenment-liberal ideas, returned to their homeland and began to spread and implement European liberal ideas in the motherland. They became the authors and creators of the Western-Armenian national constitutional movement, the national constitution.

The Western-Armenian national constitutional movement and the adoption of the national constitution found a wide response within the Armenian public opinion and in the periodical press, including the magazines “Arevk” and “Arevmutk” representing the Western-Armenian democratic movement, published in Paris under the editorship of Stephan Voskanyan. In Armenian historiography, the position of “Arevk” and “Arevmutk” magazines on the Western Armenian constitutional movement is not fully illuminated. S. Voskanyan welcomes the adoption of the national constitution, at the same time urging the Armenians not to be confined to the adoption of the national constitution, but to be engaged in the education and enlightenment of the people. He feels hopeful that one day the Armenians will break the yoke of foreigners and restore their independence.

Ներկայացվել է 15.10.2021 թ.

Գրախոսվել է 22.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.